ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հուլիսի 1-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արսեն ծ. վրդ. Բերբերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 5-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետի հրավերով ԱՄՆ-ից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

*
* *

Հուլիսի 8-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի հրավերով, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Անգլիայի հայրապետական պատվիրակ տ. Պսակ արքեպ. Թումայանը:

Սրբազանին օդանավակայանում դիմավորում են Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և Աղվան կիսասարկավագ Գասպարյանը:

*
* *

Հուլիսի 9-ին, երկուշաբթի.—Այսօր հոգեվոր ճեմարանի սույն թվականի չորս շրջանավարտ-սարկավագներ՝ Սամվել Պետրոսյանը, Ավետիք Արաբաջյանը, Վրեժ Նաջարյանը և Ռոբերտ Նազարյանը, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, մեկ շաբաթ ժամանակով մեկնեցին Լենինգրադ՝ որպես տեղի հոգևոր ակադեմիայի հյուրեր:

Մայր Աթոռի սարկավագներին օդանավակայանում դիմավորեցին, հանուն հոգևոր ակադեմիայի, քահանա հայրեր և սարկավագներ:

Մայր Աթոռի սարկավագները այցելեցին ռուսական եկեղեցիները, Լենինգրադի և շրջակայքի տեսարժան-պատմական վայրերն ու թանգարանները:

Վերջում Մայր Աթոռի սարկավագները այցելեցին հոգևոր ակադեմիա, ուր նրանց պատվին պաշտոնական ճաշկերույթ տվեց հոգևոր ակադեմիայի ռեկտոր Մելիտոն եպիսկոպոսը:

Նույն օրը Մայր Աթոռի սարկավագներին ընդունեց Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ տ. Նիկոդիմը և նրանց հետ ունեցավ ջերմ, հայրական զրույց:

Հանուն Վեհափառ Հայրապետի «Էջմիածին» ամսագրի խմբագրությունն իր ջերմ շնորհակալություններն է հայտնում Լենինգրադի միտրոպոլտությանը և հոգևոր ակադեմիայի տեսչությանը՝ Մայր Աթոռի սարկավագներին ցույց տված ջերմ, հյուրընկալ վերաբերմունքի համար:

*
* *

Հուլիսի 12-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովպայ.

Այսօր Օշականի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցում ս. պատարագ է մատուցում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Սահակի և ս. Մեսրոպի մշակութային, թարգմանական և հայրենասիրական գործունեության մասին:

Ս. պատարագի արարողությանը մասնակցում է Մայր Աթոռի միաբանությունը և հոգևոր ճեմարանի ուսանողությունը:

Ս. պատարագի արարողությունից հետո հոգեհանգստյան մասնավոր պաշտոն է կատարվում Վահան Ամատունի իշխանի գերեզմանի առջև՝ հայ մշակույթի բոլոր վաստակավորների հիշատակին:

*
* *

Հուլիսի 15-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Հոգեգալստեան. Գիւտ տփոյ սրբուհւոյ Աստուածածնի.

Մայր տաճարում իր ծայրագույն վարդապետության անդրանիկ պատարագն է մատուցում տ. Գևորգ ծ. վրդ. Սերայդարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Թագաւոր երկնաւոր զեկեղեցի քո անշարժ պահեա» (շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 19-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետին հրաժեշտ տալով ԱՄՆ մեկնեցին տեղի Հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպության 19 անդամ-անդամուհիներ՝ ղեկավարությամբ տ. Ներսես քհն. Ճեպեճյանի, որոնք մոտ մեկ ամիս ժամանակով Վեհափառ Հայրապետի հրավերով ուխտավորաբար գտնվում էին ս. Էջմիածնում և Հայաստանում՝ որպես Մայր Աթոռի հյուրեր:

Սույն երիտասարդական խումբը կիրակի օրերին միշտ ներկա եղավ ս. պատարագին, ս. հաղորդություն ստացավ, հանդիպումներ ունեցավ Մայր Աթոռի սարկավագների և հոգևոր ճեմարանի ուսանողների հետ:

Վեհափառ Հայրապետը բարեհաճեց մի քանի անգամ ընդունել եկեղեցասեր միության այս անդամ-անդամուհիներին, հետաքրքրվեց նրանց կյանքով ու գործունեությամբ, քաջալերեց նրանց աստվածահաճո ձեռնարկները և տվեց հայրապետական Իր պատգամն ու օրհնությունները:

Սույն երիտասարդ-երիտասարդուհիները այցելեցին նաև հայրենիքի տեսարժան վայրերը, ուխտի գնացին սրբավայրերն ու վանքերը, և նրանց համար Արտասահմանի հետ հայ մշակութային կապի ընկերությունը կազմակերպեց հաճախակի դասախոսություններ հայ ժողովրդի պատմության և մշակույթի վերաբերյալ:

*
* *

Հուլիսի 20-ին, ուրբաթ.—Այսօր, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, իր պաշտոնատեղին՝ Լոնդոն է մեկնում տ. Պսակ արքեպ. Թումայանը:

Տ. Պսակ սրբազանին օդանավակայանում ճանապարհում են տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և Աղվան կիսասարկավագ Գասպարյանը:

*
* *

Հուլիսի 24-ին, երեքշաբթի.—Այսօր, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից, ԱՄՆ է մեկնում տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Սրբազանին օդանավակայանում ճանապարհում են տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը, տ. Բագրատ աբդ. Գալստյանը և Աղվան կիսասարկավագ Գասպարյանը:

*
* *

Հուլիսի 26-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհափառ Հայրապետը հանգստանալու մեկնեց Կիսլովոդսկի «Կրասնի կամեն» առողջարան:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում է տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհում են, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի գլխավորությամբ, Մայր Աթոռի միաբանությունն ու մայրավանքի պաշտոնեությունը:

Վեհափառ Հայրապետին ճանապարհում է նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը: